ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«27» 08 2025թ.
№ ԿԱՆՀ/1329

«ԽԱՍ-ԽԱՋ» ՍՊԸ-ին
ՀՎՀՀ 01546394
ՀՀ, ք. Երևան, Արաբկիր
թ. Փափազյան փ.23, 25 շին.
հեռ. 099 56 23 33
էլ. հասցեն՝ khaskhazyan.ruben75@gmail.com

ՀՀ պաշտպանության նախարարության և «ԽԱՍ-ԽԱՋ» ՍՊ ընկերության (այսուհետև՝ Ընկերություն) միջև 23.06.2025թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-25-10/6-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում Ընկերությունը ապրանքների մի մասով՝ մինչև 2025թ. 3-րդ եռամսյակը, իսկ մյուս մասով՝ 2025թ. 4-րդ եռամսյակ, ոչ ուշ քան 10.12.2025թ.-ը պետք է մատակարարեր ապրանքներ՝ 1-ին և 18-րդ չափաբաժինների մասով, սակայն Ընկերությունը հրաժարվել է վերոնշյալ բոլոր չափաբաժինների մասով ապրանքների մատակարարումից:

Հիմք ընդունելով Պայմանագրի 6.3 կետը (Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև. ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու կամ չմատակարարելու դեպքում) ՀՀ պաշտպանության նախարարությունը 2025թ. օգոստոսի 27-ին միակողմանի ամբողջությամբ լուծել է Պայմանագիրը:

Տեղեկացնում եմ, որ Ընկերությունը պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 20,000 ՀՀ դրամ՝ որպես տուգանք (Պայմանագրի 6.3 կետի համաձայն):

Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում ենթակա է գանձման նաև պայմանագրի կատարման ապահովման գումարը՝ 436,110 ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am

900005000758 հաշվեհամարին և որակավորման ապահովման գումարը՝ 654,165 ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900008000664 հաշվեհամարին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Ելնելով վերոգրյալից տեղեկացնում եմ, եթե մինչև 2025թ. սեպտեմբերի 5-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված 436,110 ՀՀ դրամ՝ պայմանագրի կատարման ապահովման և 654,165 ՀՀ դրամ՝ որակավորման ապահովման գումարները, ապա Ընկերությունը չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարները անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարված կտրոնների բնօրինակները մինչև 2025թ. սեպտեմբերի 5-ը ներառյալ ներկայացնել ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչություն, 2073 սենյակ:

Տեղեկացնում եմ նաև, որ պայմանագրի և որակավորման ապահովման գումարները, ինչպես նաև հաշվարկված տուգանքի գումարները Ձեր կողմից չվճարելու դեպքում ՀՀ պաշտպանության նախարարությունը կձեռնարկի միջոցներ դրանց գանձելու ուղղությամբ:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և «ԽԱՍ-ԽԱԶ» ՍՊ ընկերության միջև 23.06.2025թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-25-10/6-1 գնման պայմանագրի 8.3 կետը՝ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից այլ ընկերություններից նշված պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրերով և քանակներով վերոնշյալ բոլոր չափաբաժինների մասով ապրանքներ ձեռքբերելու դեպքում Ընկերությունը պարտավոր է փոխհատուցել գնային տարբերությունը՝ եթե նոր պայմանագրերը կնքվում են ավելի թանկ գնով, որի վերաբերյալ Ձեզ լրացուցիչ կծանուցվի:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ